եւն: Նաեւ սուրբ հայրն եւազգ գրէ· Նի՛ստ դատաւոր ֆոյոյ սրտիդ յատենի դատել եւ ֆննել: Զի թէ ճշմարտապէս ֆննիցեմք, չունիմք պատասխանի Աստուծոյ· զի Տէրն մեր հրամայէ· Տեսեալ զգործս ձեր բարիս՝ փառաւորեսցեն զՀայր: Իսկ մեք ցուցամք զգործս զայթակղելիս եւ օրինակ չար յետակայից· ըստ Պօղոսի՝ են մեղք որ զկնի երթան ի դատաստան: Միթէ մեք անմա՞հ եմք որ ոչ մտածեմք զհաշիւն զոր պահանջելոցդ ի մէնջ, ըստ մարգարէին· Ո՛հ հովիւք դատապարտք, որք եղէք, գայթակղութիւն դիտանոցին: Զիջցո՛ւք, ո՛վ սիրելի, զիջցո՛ւք, զի կարասցուք տալ պատասխանի այնմ որ մինչ ի յետին բնիտնն պահանջէ: Եւ արդ ըստ խնդրոյ Մարտիրոս վարդապետին եւ ըստ բաղձանաց ժողովրդեանն, անկեղծ կայծ բանի մարմնեղէն առազաստի յայտնապէս ծրեցի: Իսկ եթէ ըստ մարդկային բարուց մտածիցեմք՝ պատճառելով զմիմեանս, մնայ սկզբնաչարին աշխարհակէզ հուրն անշիջելի ի մէջ ողորմելի եւ տառապեալ հայազուն զարմի, եւ լինի բազում չարեաց առիթ եւ անմեղ հոգւոց կորուստ, ներկայիս եւ ապագայից զկնի եկելոց, եւ մեք մնամք դատապարտ եւ անպատասխանի առաջի անաչառ դատաւորին՝ զբազմացն պատիժ կրելով անձամբ: Ապա թէ զիջանիս ի հրամանս մեր եւ ի կոչ ժողովրդեանս՝ կատարելով զՔրիստոսի հրաման, ոչ սակաւ վնասակար իրաց հերքումն լինի եւ յոլով բարեաց սկիզբն եւ յիշատակ բարի զկնի մեր եւ ուղիղ պողոտայ